Արձանագրություն N 3

Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստիին

ք. Երևան «28» «Հունիսի» 2023թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ե. Էլիբեկյան
Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Ա.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան
Բացակայում էր՝ Հ. Խուրշուդյանը

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ե. Էլիբեկյան)

Ընդունել ի գիտություն, որ 01.06.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հունիսի 19-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի հունիսի 20-ին ժամը 11:00-ին: 2023 թվականի հունիսի 21-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ	info@amamed.am	01332401
2	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	tenders@margpharma.com	00842845
3	«Սիուն» ՍՊԸ		00901201
4	«Դիավանտ» ՍՊԸ		00255375

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ե. Էլիբեկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ե. Էլիբեկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակցին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումը.

«ԱՄԱ Մեդիքլ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հետևյալ անհամապատասխանությունները՝ գնահատող հանձնաժողովը Ձեր կողմից ներկայացնող ապրանքի արտադրողի պաշտոնական կայքի ուսումնասիրության ժամանակ չի հայտնաբերել «Ռենտգենյան ճառագայթիչի պտույտը 360°» չափանիշի առկայության մասին տեղեկատվությունը, անհրաժեշտ է շտկել կամ հաստատել հրավերի պահանջներով «Ռենտգենյան ճառագայթիչի պտույտը ոչ պակաս քան 240°» չափանիշը Ձեր կողմից ներկայացված «Ռենտգենյան ճառագայթիչի պտույտը 360°» առկայությունը: Ինչպես նաև անհրաժեշտ է շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի հստակ որակի սերտիֆիկատների առկայությունը, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ե. Էլիբեկյան

Անդամներ՝ ---------- Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

---------- Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան